



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագիր

Օգուտներ

- Ջրային ռեսուրսի ավելի արդյունավետ օգտագործում
- Հայանիստի ծրագրի դեպքում տարեկան մոտ 1.1 մլն . մ³ ստորերկրյա ջրի խնայողություն
- Համայնքների անջրդի հողերի ոռոգում և հողերի դեգրադացիայի կանխում
- Հայանիստի դեպքում համակարգը թույլ է տալիս ոռոգել մոտ 40 հա հողատարածք
- Համայնքներում հողագործության խթանում
- Համայնքների սոցիալական վիճակի բարելավում

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԶԿՆԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ ՋՐԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Պիլոտային ծրագիր՝ Արարատի մարզի Հայանիստ գյուղ:

Ֆինանսավորող կողմեր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագիր, Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա ընկերություն, ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագիր:

Գյուղի համայնքային հողատարածքների մի մասի ոռոգումն իրականացվում է մոտակա ձկնաբուծարանի հետադարձ ջրերով: Ոռոգման խնդրի լուծման նպատակով ձկնաբուծարանի ջրերի ելքի կետում կառուցվել է պոմպակայան, տեղադրվել է նոր ոռոգման ցանց, իրականացվել է հողատերերի ուսուցում կայուն գյուղատնտեսության վարման թեմայով: Անվտանգության ապահովման նպատակով ԳԱՏՕ ծրագրի կողմից մի քանի անգամ ստուգվել է ձկնաբուծարանի կերային բազան, ջրի որակը և հաստատվել, որ ձկան համար օգտագործվող կերը զերծ է վնասակար նյութերից, իսկ ջուրը համապատասխանում է Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից սահմանված ոռոգման նպատակներով օգտագործվող ջրի որակի ստանդարտներին:

2017 թ. սեպտեմբերին կազմակերպվել է Հայանիստում աճեցված արտադրանքի՝ լոլիկի, սմբուկի, բամիայի, սեխի և ձմերուկի մի քանի տեսակների օրգանոլեպտիկ փորձաքննություն, որի արդյունքում ստուգվող նմուշները 5 նիշանոց սանդղակով ստացել են 4-5 միավոր: ՀՀ գյուղատնտեսության նախարարության Մննդամթերքի անվտանգության պետական ծառայության լաբորատորիայում ստուգվել է սեխի և ձմերուկի քիմիական կազմը: Փորձաքննությունը և լաբորատոր ստուգումը հաստատել են, որ պտուղների նմուշներն օժտված են իրենց տեսակին բնորոշ համային հատկանիշներով և համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված սննդի անվտանգության նորմերին:



Ձկնաբուծարանների հետադարձ ջրերի երկրորդային օգտագործումը ոռոգման նպատակներով նպաստում է ստորերկրյա ջրային ռեսուրսի ավելի արդյունավետ օգտագործմանը: Հայանիստի ֆերմերների արտադրանքի փորձաքննությունը հաստատեց, որ ձկնաբուծարանի ջրերով աճեցված պտուղներն օժտված են իրենց տեսակին բնորոշ համային հատկանիշներով: